


ԹՈՓԱԽՏԸ

ԵՒ ԲԺՇԿՈՒԹԵԱՆ ԱՐԴԻ ՄԻՋՈՅՆԵՐՆ

ԻՐ ԱՌՋԵՒՐ ԱՌՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ



Կերակորր: — Թորքախտաւորի մը առողջացման մէջ սնունդը ամենագլխաւոր տեղը կը բռնէ: Երբ Թորքախտաւոր մը քիչ կ'ուտէ պէտք է արուեստը գիտնալ զինքը կերակրելու. լաւ մարսուած կերակուր մը իր ամենէն լաւ գեղն է: Բնականորէն Թորքախտաւորները քիչ կ'ուտեն և գէշ ալ կը մարսեն. բժիշկը ամէն ջանք պէտք է ընէ որպէս զի իր հիւանդն ուտէ, դիմելով նոյն իսկ՝ եթէ հարկ ըլլայ՝ արուեստական միջոցներու: Ստէպ դիտուած է որ այն Թորքախտաւորներն որոնք ջերմ ունին և հետեւաբար շատ քիչ կ'ուտեն, ստամոքսի արուեստական յաւցումով թէ՛ իրենց ջերմին առջեւ կ'առնուի և թէ՛ կարելի է իրենց արտոթակ տալ: Գիտենք որ երբ ստամոքս մը տկար է՝ մէջի չմարսուած կերակուրները կը սկսին փտտիլ և հետեւաբար թոյներ յառաջ բերել, որոնք ինչպէս *Alberton* նապացուցուց՝ ըղեղին վրայ ազդելով՝ կազմուածքի ընդհանուր խանգարում մը յառաջ կը բերեն. ասկից բացայայտ կ'երեւին ստամոքսի լուացման օգուտներն, որոնք սակայն պէտք չէ չափազանցուին: Ըստ *Daremberg* Թորքախտաւորի մը կերակուրն պէտք է ըլլայ մէկ օրուան մէջ 600 կրմ. հաց, 80 կրամ կարագ, երեք հաւկիթ, կէս լիդրէն մէկ լիդր կաթ և 100 կրամ ալիւրակերպ (մաքարոնի, և այլն...) կամ կանանչեղէն. հարկ չկայ որ իրենց ալ մեզ նման որոշ ժամեր ունենան ուտելու համար, որով կարելի է վերել ըսուածը՝ երեք կամ չորս նոյն իսկ հիւց անգամներու բաժնել: *Weiss* (Բէշդէպուրէն) չեփած միսը առաջնակարգ դեղ կը համարի Թորքախտաւորներու համար. պատրաստելու կերպը հետեւեալն է.

Նախ միսը (ջրոտ չեղած մասը) պէտք է փոքրիկ փոքրիկ կտրուի, յետոյ սանդի մը մէջ երկայն ժամանակ ծեծուի ու վերջը բարակ մաղէ մ'անցուի. հոտը իսկապէս համար կարելի է ասոր հացի չոր փշրանքներ խառնել կամ քիչ մը cognac աւելցնել կամ կանաչեղէններ, կամ միսի ջուր, և այլն, ու այսպէս սննդաբար կերակուր մը պատրաստել: *Daremberg* օրը 150 կրամէն 250 կր. միս տալով իր հիւանդներուն՝ շատեր մահուանէ ազատած է. բնական է որ վարժեցնելու համար՝ առաջ քիչէն պէտք է սկսիլ, 20 կամ 50 կրամէն. *Daremberg* շատ կարեւորութիւն կու տայ չեփած միսին և կ'ուզէ որ ամէն պարագային տրուի և երբ սրտի խառնուրդ պատճառէ՝ այն ժամանակ ասոր առջեւն առնելու համար ինք իր հիւանդներուն քիչ մը պիզմուծի բորակատ կու տայ: *Debove* Թորքախտաւորներու կերակուրին մէջ մտուց նաեւ միսի փոշին որու 300 կրամ մը հաւասար է մէկուկէս քիլօկրամ միսի. ասոր հոտն ալ արգիլելու համար լաւ է կաթի հետ խառնել. այս միջոցաւ ալ տկար հիւանդներուն մեծ օգուտներ կարելի է տալ: Միսի ծած կոշուածը՝ ստէպ խարդախեալ ըլլալուն պատճառաւ՝ զօրութեամբ և, որով լաւ է հիւանդներուն չի տալ: Մարսողօրը (*peptone*) Թորքախտաւորներու համար օգտակարագոյն են, վասն զի դիւրաւ կ'իւրացուին ստամոքսէն, արդէն իսկ կերպով մը մարսուած ըլլալուն պատճառաւ. վասն զի՝ ինչպէս գիտենք՝ որպէս զի բնասպիտաւոր (*albuminoïde*) մարմինները մարսուին, հարկ է որ առաջ մարսողօս զառնան: Մածայքը (*gelatine*) և փողոյի իւղը (*huile de foie de morue*) Թորքախտաւորին սովորական կերակուրները պէտք են ըլլալ. մասնաւորապէս այս վերջինս որ իր իւղին հետ կը պարունակէ նաեւ նիւթեր՝ որոնք մարսողութիւնը կը դիւրացնեն. անոնք որոնց սրտի խառնուրդ կը պատճառէ՝ կրնան որ և իցէ կերպ գործածել զայն իրենց դիւրամատչելի դարձնելու համար, (լէմոն,

են...) կանաչեղէնները պարզ մարսողութեան օգնելու չափ պէտք է գործածուին և եփած, եթէ դիւրամարս չեն, կաթը կատարեալ անուշդ մ'ըլլալով՝ աւելորդ է վրան ծանրանալն իսկ՝ իր օգտակարութիւնը ցուցնելու համար, թոքախտի մը գործածած կաթը եռացած պէտք է ըլլայ միշտ և ամուացած (stérilisé), վստահ ըլլալու համար: Անոնք որոնք կաթը զփռաւ, րամարս կը գտնեն՝ կրնան շատ աւելի օգտակար կերպով մածուն ուտել, կամ կաթէն ուրիշ բոլոր պատրաստուած նիւթերը, ինչպէս պակիթ, քումիս (խմիչ մ'է զոր թաթարները կը պատրաստեն. Եւրոպա ալ կը շինեն խառնելով կաթին հետ զարնջուրի խմորը) և կարագ. քումիթն ալ որ կովկաս կը գործածուի, երբ պատրաստուի խմորի մը միջոցաւ, օգտակար է թոքախտաւորներուն. *Boyaïmski* կաթի այս բաղադրութիւններով հարիւրի վրայ տասը թոքախտաւոր կը բժշկէ և 70 ալ՝ կը բարւոցէ: Խաղողի դարմանը Զուիցերիոյ մէջ շատ զովագրանուած է, ուր բժիշկները իրենց հիւանդներուն մէկէն մինչեւ ութը լիպրա խաղող կու տան, տաւակոյս չկայ թէ այս դարմանն օգտակար կրնայ ըլլալ՝ քանի որ խաղողը թթուներ պարունակելուն պատճառաւ՝ պնդութեան առջեւ կ'առնէ: Այս դարմանները պէտք է փոփոխակի ընել՝ հիւանդը չի ձանձրացնելու համար: Տուճ ալ կրնայ օգտակար ըլլալ թոքախտաւորներուն (եթէ վարժուած են և յօշացաւ չունին) քանի որ ընդհանուր աբթնութիւն մը յառաջ կը բերէ, ախորժակ, և այլն. վարժուելու համար նախ կարելի է գաղջ ջուրով սկըսիլ, յետոյ թիչ թիչ ջուրին աստիճանն իջցնել: Տուճը մասնաւորապէս օգտակար է անոնց՝ որոնց հիւանդութիւնը նոր սկըսած է:

ՌՈՒՓԱՒՈՒՄԻ ՊԵՏ ԴԵՂԵՐ

Թոքախտին դէմ գործածուած դեղերէն ասաջնակարգ տեղ կը բռնեն զատկականի (arsénique) բաղադրութիւնները՝ որոնք

սակայն հակամիջրոպային ոյժ մը չունին. ախորժակ կը գրգռեն և ընդհանուր կերպով կազմուածքը կ'ուժովցնեն: Սովորաւոր կան աղը *Latour*էն կարծուեցաւ թոքախտին յատուկ (spécifique) դեղն ըլլալ. թոքախտի բուժման մէջ տարակոյս չկայ թէ սովորական աղը կրնայ օգտակար մաս մ'ունենալ, քանի որ այս հիւանդները շատ աղեր կը կորսնցնեն իրենց մարմինն՝ ուրիշ ճամբաներով. բայց դժբաղդաբար աղը դեղ մը չէ թոքախտին դէմ. — Բնական (tanin) կը գործածուէր անցեալ դարէն ի վեր թոքախտին դէմ. սակայն մտերս ալ՝ օրը 2էն մինչեւ հինգ կրամ տալով (դեղահատ. pillule, կամ բուր. հատ. pastille) բժշկուեցան շատ մը թոքախտաւորներ ինչպէս կ'ապահովցնեն *Viti* և *De Marco* (խտալիս). իսկ *Lipsia*ի Բազմաբուժարանը (polyclinique) կը գործածէ՝ շատ օգուտներ ստանալով՝ հետեւեալ դեղագիրը.

Բնաղան 2 կրամ, ջուր 100 կր. և հակկթի ճերմկոյ 100 կր.

Լուսածնատնեղն (phosphate) մեծ կարեւորութիւն ունին թոքախտի դարմանման մէջ. նախ՝ վասն զի ասոնք մարմինը կազմող զլխաւոր նիւթերէն մին են և երկրորդ՝ թոքախտաւորի արիւնը կը պարուհանէ 0,32 լուսածնատ, մինչ ատողջ մարդուն 0,354 (ապացուցուած *Béquerel*էն և *Rodier*էն): Հիւանդներուն այս նիւթը տալու ամենալաւ կերպն հետեւեալն է. այն կովերուն ուակից թոքախտաւորներն իրենց կաթը կ'առնեն՝ օրը 80 կրամ լուսածնատ կիր կերցնել, (phosphate de calcium), 15 կրամ սովորական աղին հետ և այս ամբողջը խառնելով կովու կերակուրին հետ. այսպիսի կովէ մը ստացուած կաթը կը պարունակէ մէկ լիտրի մէջ 3 կրամ լուսածնատ. եթէ այս կարելի չէ՝ հետեւեալ դեղագիրով նոյնը կ'ըստացուի:

3 կրամ շնական թթու (ac. lactique). — կր. կրկնալուսածնատ կիր (biphosphate de calcium) և 300 կրամ ջուր. օրը երեք ապուրի զգալ ատնելով:

կրեօզոթի գործածութիւնն թոքախտին դէմ դեռ 1830ին սկսաւ և 1887ին Bouchard և Gimbert հրատարակեցին թէ տալով 40 հարիւրորդակրամ 90 թոքախտաւորներու, բացի 39էն՝ միւս բոլորն ալ առողջացան կամ բարելաւեցան մեծապէս. այսօր ալ գործածութեան մէջն է և իր օգուտը կը ցուցնէ հիւանդներուն վերայ, թիչ ժամանակ վերջ քրտինքը կը նուազի, ոյժը կը վերադառնայ և միջին հաշուով 100ին 55 կը բարելաւուին: Անոնք որ բերնով չեն կրնար առնել՝ կարելի է իրենց մարմնամեծ (friction) բռնել. այժմ կ'ըլլուին նաեւ օդարուծային հաստատութեանց մէջ կրեօզոթի խտացեալ օդով լոգանքներ ալ աւելի մեծ օգուտներ ստանալով: Այս կերպը կը գործածէ նաև թորինի Բազմարուժարանին տեսուչ Scarpa-ն, հիմնադիր իտալիոյ առաջնակարգ օդարուժարանին: Գոսյակիկը (gaïac) կը գործածուի կրեօզոթին նման առէպ՝ աւելի օգտակար արդիւնքներ ստանալով, մասնաւորապէս ներմուծումներով: Ittiolo-ն որ թորինի Bozzolo-ի գիւտէն վերջ կը գործածուի՝ յաջողութեամբ՝ դուսի (coryza) և ցնցուդի յամբընթաց ապավիժութեանց (catarrhe) դէմ՝ փորձուեցաւ նաեւ թոքախտին դէմ: Ինչչեւ այժմ կատարուած փորձերը (Scarpa-ի օդարուժարանին մէջ) մեծ յոյսեր կու տան այս նիւթին նկատմամբ որուն ամենէն լաւ բաղադրութիւնն է՝ *guaicolter pinclorithiolicon*, որու մէջ միացուած են նաեւ ուրիշ շատ մը օգտակար դեղեր:

Ջերմի, հագի և քրտինքի դէմ դեղեր: — Թոքախտաւոր մը իր ջերմ ունենալը վստահ հասկնալու համար, իր մարմնոյն աստիճանը օրը երեք անգամ պէտք է առնէ, ժամը 10ին, 5ին և պտուկած ատեն. և երբ այս միջոցներու մէջ մէկ աստիճան տարբերութիւն ունենայ՝ ինք անտարաւ կոյս ջերմ ունի: Ընդհանրապէս երբ ջերմը թեթեւ է հանգստութեամբ ինքն իրեն կ'անցնի, հակառակ պարագային պէտք է դեղերու դիմել մեծ զգուշութեամբ, ուշ զննելով աւելի ստամոքսը չարելու բան

թէ ջերմին առջին առնելու: Այժմ բացի ֆինիկանէ և *salicilate de soude* ն, միւս բոլոր հակաջերմներն կը գործածուին. ինչպէս անթիբիոթին (գոր լաւ է սէլցի ջուրով առնել) ֆէնալէզին, և այլն . . . քանի որ թոքախտաւորները դիւրագրգիռ են՝ լաւ է այս հակաջերմներուն խանոսկներ (bromure) խառնել որոնք հանգստացուցիչ են: Այն ջերմը որ կ'ապստամբի այս դեղերուն դէմ՝ կը յաղթուի *ittiolo* ի ներմուծումներ (injection) ընելով թոքերու փապարին մէջ. ջերմը իսկոյն երկու երեք ժամէն կը դադրի: Գաղջ ջուրով լուգանքներն ալ ջերմին լաւ կ'ընեն և Սքաու-իս կ'առաջարկէ՝ երկու ժամ առաջ հիւանդը այդ ջուրին մէջ դնել գալիք ջերմին առջին առնելու համար. աւելորդ է ըսելն թէ ամէն միջոց ձեռք պէտք է առնուի հիւանդը չի մեղմեցնելու համար: Սքաու-իսն նիհար թոքախտաւոր տիկին մը որու ջերմն անկարելի եղած էր ուրիշ կերպով անցնելն, եօթը օր շարունակ գաղջ ջուրի մէջ բռնելով իր հիւանդը կ'առողջացնէ: Ջերմ ունեցող թոքախտաւոր մը պէտք է հանգիստ մնայ և չի քալէ, պէտք չէ նմանապէս կարագ ուտէ և որ և իցէ իւզ. ոյժ պէտք է տրուի կաթին և ալիւրա-կերպարուն:

Գրտինքը. — Գիշերային քրտինքն չի կայ աւելի նեղացուցիչ բան մը թոքախտաւորին համար. քրտինքը ջերմի վերջաձալու ատեն կու գայ, որով եթէ մէկը հակաջերմներն (antipirétique) լաւ գործածել գիտէ, ասոնց առջին ալ կ'առնէ. անոնք որ շատ կը քրտնեն՝ երեկոյեան դէմ ալքոլով բոլոր մարմնոյն մարմնումն ընելով շատ օգուտներ կը ստանան. մարմնումը պէտք չէ երեք կամ չորս փայրկեանէ աւելի տեսէ՝ չի մեղմեցնելու համար հիւանդը. իսկ անոնց որ շատ կ'առնեն՝ միմիայն ոտքերը քաջախով լուալու է միայն քառորդ մը. — (այսպէս կ'ընէ Սքաուիսն իւր օդարուժարանին մէջ): Այնչդիս և Ամերիկա հիւանդին քրտինքին առջին առնելու համար՝ կը գործածեն կէս հազարերորդակրամ *solphated atropine*,


պատկելէն մի քանի ժամ առաջ տալով զայն: Աղարկին ստնկը նոյն նպատակով կը գործածուի քսանէն երեսուն հարիւրորդակրամ առնելով պատկելէն առաջ: — Արիւն թընելուն մէկ հատիկ դեղը՝ կատարեալ հանգստութիւնն է, վասն զի դիտուած է որ անոնք որ դադրած էին աւրիւն թընելէ՝ կրկին կը սկսին յոգնութենէ մը վերջ, Շատերուն արեան առջեւ կ'առնուի պարզ եփած կանանչեղէններ, ալիւրակերպ կերակուրներ և կաթ տալով. ուշադրութիւն պէտք է ընել որ թորքախտաւորին ո՞ր և իցէ կերածը տաք չըլլայ. միա ուտելը արգիւելու է՝ ըլլայ եփած ըլլայ հում: Իբր դեղ Բոսանձարիտ (ergotine) մէկ հատիկ է և առնուելու է օրուան մէջ 4 կամ հինգ հազարորդաւ կրամ: Գիշերը արիւն թընող թորքախտաւորները պէտք են երկու ժամն անգամ մը արթնցնել, որպէս զի թընեն, հակառակ պարագային առտուն թընելու դժուարութիւններ կ'ունենան: Երբ հիւանդը չկրճուի մատնետունկի տերեւներու փոշին կարելի է յաջողութեամբ գործածել արեան դէմ. ինչպէս նաեւ *hydrastis canadensis* որ քրտինքին առջեւ ալ կ'առնէ: Սառի փոքրիկ կտորներ կուլ տալը՝ ինչպէս միզային գործարաններուն վրայ սառնելը օգուտներ կրնան ունենալ և պէտք է փորձուի. սակայն երբ արիւնը շատ զայ և կարելի չըլլայ դեղ տալ՝ այն ժամանակ *Iandi* ծծոցը կարելի է գործածել մեծ յաջողութեամբ. սա գործիք մ'է՝ որու միջոցաւ հնչուիներ բանեցնելով բազուկին կամ ոտքերուն վրայ, նոյն տեղերն շատ արիւն կը բերուի մարմնոյն ուրիշ մասերէն, որոնց մէջ հետեւաբար կը նուազի արեան քանակութիւնը. այս կերպ գործելը կը համապատասխանէ չորս անգամ արիւնառութեան (*saignée*) որ հին ժամանակ գործածութեան մէջ էր. Գորլլամիին երեւելի գիտնականը զայն տարիներ գործածած է՝ առանց ո՞ր և իցէ անհայտողութեան մը հանդիպելու:

Հազր: — Երբ հազր չափազանց չէ և հիւանդը միանգամայն կը թընէ, պէտք

չէ առջեւ առնուի, բայց երբ հազարու դժուարութիւններ ունենայ և ընդհանուր նեղութիւն մը զգայ՝ այն ժամանակ պէտք է դիմել հազի սովորական դեղերուն, մասնաւորապէս մորֆինին. Արաուիան իր հաստատութեան մէջ կը գործածէ հետեւեալ դեղագիրը. — մարուք *terpinol* 10 կրամ, հալեցնելով զայն 10 կրամ զուտ ալցոլի մէջ և աւելցնելով ասոր հինգ կրամ որժաջուցիչ ընկոյզ. երբ պէտքը զգացուի ասոր վրայ ալ կարելի է մի քիչ մորֆին աւելցնել. — Երբ թորքախտաւոր մը շատունակ գլխու ցաւեր ունի որ միշտ երթալով կը շառնան և *ménigite* կասկած կու տայ, այս պարագային ամենալաւ դեղն է քլուակերպի ներմոծումներն կուրծքին մօտ: — Թորքախտաւոր մը՝ իր հիւանդութեան երեւոյթներուն առջեւ անոսած ըլլալուն համար պէտք չէ ինքզինքը առողջացած կարծէ, պէտք է դեռ երկայն ժամանակ համբերութեամբ և ճշգրտութեամբ հետեւի բժշկին ըսածներուն:

ՅԱՐՈՒԹԻՒՆ ՊԱՐՏՈՒՆԵՆ

Շարաշարելի



Ձ Ա Ն Պ Ա Ն Ը

Վերն ամպերու ծիրանին մէջ փարփառ կը թաղուի հին զանգակատունը դիպին. Հոն կը տանի աղօթքներուն իր բարբառ՝ Հրէշուն, ինչպէս ժայթքող հեծանքը ուղիւն:

Արշալոյսին և իրիկունս դէմ այսպէս կ'երգէ, կու լայ կապոյտին մէջ՝ որ Աստուած իրեն մօտիկ՝ հին դարերէն լուսաղէս՝ կ'ունենընդրէ հողիներու երգն ու լաց:

Ի՞նչ փնդիկներ քիւ կ'երկունս մէջ ցլերցան, Սիրա մը տանին և կամ հողի մը անձայն՝ Կեօթազգ մօրմէն կամ մեռնող մը արգար:

Ծեր գեղջուկին հուսարն որչափ որ տե՛՛հ՝ Պիտ՝ բարբառի ուր խընկոտ հոռւն անդադար, Խաչին սիրով՝ որ զմեթիքն ժայռ քիւնէ:

Ահարոն